ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ ք. Երևան, Մոսկովյան 1
06 » 10 2014

№ 7/7226

Հայաստանի Հանրապետության
վարչապետ
պարոն Հ.Աբրահամյանին

Հարգարժան պարոն Աբրահամյան

ՀՀ քննչական կոմիտեի և «ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտ» պետական կառավարչական հիմնարկի բնականոն գործունեությունը չխաթարելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել հրատապ ձեռք բերել անձը հաստատող՝ քննչական կոմիտեի խորհրդանիշով, համարակալված մետաղյա քարտեր և վկայականներ:

Ձեզ է ներկայացվում «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին գումայ հատկացնելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414- Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և գնման գործընթացը կազմակերպելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

Ա. Հովսեփյան

ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՈՒՏՔԱՅԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Մուտքագրման թիվ 035-30594
«06» 10 2014թ.

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2014 թվականի N Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N1414-Ն ՈՐՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ կետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և դեպարտամենտի ծառայողների բնականոն գործունեությունը, անցագրային հատուկ ռեժիմը ապահովելու համար՝ անձը հաստատող՝ քննչական կոմիտեի խորհրդանշանով մետաղյա քարտերի և վկայականների ձեռքբերման նպատակով՝ Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդի հաշվին Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին հատկացնել 5259,0 հազ. դրամ, այդ թվում՝ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝

1) «Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածով՝ 4459,0 հազ.դրամ

2) «Տեղեկատվական ծառայություններ» հոդվածով՝ 800.0հազ.դրամ

2. «Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1414-Ն որոշման NN11 և 12 հավելվածներում կատարել լրացումներ՝ համաձայն NN 1,2 և 3 հավելվածների:

3. Թույլատրել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահին սույն որոշման 1-ին կետում անձը հաստատող՝ քննչական կոմիտեի խորհրդանշանով մետաղյա քարտերի և վկայականների հատկացված գումարներով գնումները իրականացնել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի համաձայն, բանակցային ընթացակարգով՝ առանց գնումների մասին հայտարարությունը նախապես հայտարարելու:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀՀ կառավարության որոշման նախագծի հիմնավորում

	Իրավական ակտի հիմնավորում
1	**Անհրաժեշտությունը**
	Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի և դեպարտամենտի անցագրային հատուկ ռեժիմի աշխատանքները բնականոն կազմակերպելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել ձեռքբերել անձը հաստատող՝ քննչական կոմիտեի խորհրդանշանով մետաղյա քարտեր և վկայականներ:
2	**Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**
	Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեն նոր է կազմավորվել և անհրաժեշտ է հատուկ անցագրային ռեժիմի բնականոն գործունեությունը ապահովել անձը հաստատող՝ քննչական կոմիտեի խորհրդանշանով մետաղյա քարտերով և վկայականներով :
3.	**Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը**
	Տվյալ բնագավառը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1414-Ն որոշմամբ:
4.	**Կարգավորման նպատակը և բնույթը**
	Նախագծի ընդունման նպատակն է ՀՀ քննչական կոմիտեի և դեպարտամենտի ծառայողների անձը հաստատող՝ քննչական կոմիտեի խորհրդանշանով մետաղյա քարտերի և վկայականների ապահովում, որը կնպաստի անցագրային հատուկ ռեժիմի բնականոն գործունությանը:
5.	**Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք**
	Նախագիծը մշակվել է ՀՀ քննչական կոմիտեի դեպարտամենտի կողմից:
6.	**Ակնկալվող արդյունքը**
	Նախագծի ընդունման արդյունքում ապահովել ՀՀ քննչական կոմիտեի և դեպարտամենտի աշխատակիցների բնականոն գործունեությունը
7.	**Այլ տեղեկություններ**

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու անհրաժեշտության կամ բացակայության վերաբերյալ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ՝ այլ իրավական ակտերում փոփոխություններ կամ լրացումներ չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեում ծախսերի և եկամուտների փոփոխության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի դեկտեմբերի 19-ի N 1414-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին գումար հատկացնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունմամբ Հայաստանի Հանրապետության 2014 թվականի պետական բյուջեում նախատեսվում է ծախսերի ավելացում 5259. հազ. դրամի չափով:

Հավելված 1
ՀՀ կառավարության 2014թ.
----- ---------- N - որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ N 12 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Կոդը	Անվանումը	Գնման ձևը	Չափման միավորը	Միավորի գինը	Քանակը	Գումարը (հազար դրամ)
	Բաժին 11, Խումբ 01, Դաս 01 ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ					**5 259,0**
	01. ՀՀ կառավարության պահուստային ֆոնդ					**5 259,0**
	ՀՀ քննչական կոմիտե					5 259,0
22458200/1	Վկայականներ, դիպլոմներ և հավաստագրեր	ԲԸԱՀ	հատ	2000,0	400	800,0
22455000/1	Անձը հաստատող քարտ	ԲԸԱՀ	հատ	6500,0	686	4 459,0

Հավելված 2
ՀՀ կառավարություն
2014 թվականի N որոշում

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Չափորոշիչներ			Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)			
			Ոչ ֆինանսական ցուցանիշներ		Ֆինանսական ցուցանիշներ	
			յուն ամիս	տարի	յուն ամիս	տարի
ՄԱՍ Բ: Կառավարչական հիմնարկի անմիջական գործունեության արդյունքները						
1.Անմիջականորեն մատուցվող ծառայությունների արդյունքային ցուցանիշները						
Ծրագրային դասիչը		*Անվանումը՝*				
1180	ԱԾ 01	Քրեական գործերով նախաքննության ծառայություններ *Նկարագրություն* Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ քննչական կոմիտեի իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննություն				
քանակական		Մշակված չէ				
Որակական		Մշակված չէ				
Ժամկետայնության		Մշակված չէ				
Մատուցվող ծառայության վրա կատարվող ծախսը (հազար դրամ)			X	X		**5259,0**
Ծրագիրը (ծրագրերը), որի (որոնց) շրջանակներում իրականացվում է քաղաքականության միջոցառումը 1180 ՀՀ քննչական ծառայություններ						
Վերջնական արդյունքի նկարագրությունը Հանցագործությունների նախնդրագեղում և կոնստատում						
Ծառայություն մատուցողի (մատուցողների) անվանումը ՀՀ քննչական կոմիտե						

Հավելված 3
ՀՀ կառավարության
2014 թվականի N որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1414-Ն ՈՐՈՇՄԱՆ N 11 ՀԱՎԵԼՎԱԾԻ N 12 ԱՂՅՈՒՍԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

Ծրագրային դասիչը		Գործառական դասիչը	Ծրագիր/ Քաղաքականության միջոցառումը	Ցուցանիշների փոփոխությունը (ավելացումները նշված են դրական նշանով)
				ՀՀ 2014թ. պետական բյուջե
Ծրագիրը	Միջոցառումը	(Բաժին/Խումբ/Դաս)		(հազ. դրամ)
1180			ԾՐԱԳԻՐ	
			ՀՀ քննչական ծառայություններ	5 259,0
			Ծրագրի նկարագրությունը	
			Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ քննչական կոմիտեի իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննություն	
			Վերջնական արդյունքի նկարագրությունը	
			Հանցավորությունների կանխարգելում և կրճատում	
			Քաղաքականության միջոցառումներ ծառայություններ	
	ԱԾ01		Քրեական գործերով նախաքննության ծառայութուն	5 259,0
			Մատուցվող ծառայության նկարագրությունը	
			Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով ՀՀ քննչական կոմիտեի իրավասությանը վերապահված՝ ենթադրյալ հանցագործությունների կապակցությամբ նախաքննություն	
			Ծառայություն մատուցողի անվանումը	
			ՀՀ քննչական կոմիտե	